ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ
(1933–1980)

Հայ արձակագիր, լրագրող Մ. Գալշոյանը ծնվել է ու մեծացել Հայաստանի Թալինի շրջանի Կաթնաղբյուր գյուղում, և նրա մեջ մինչև կյանքի վերջը մնաց սասունցի լինելու գիտակցությունը: Նրա ծնողները սասունցի փախստականներ էին, որոնք Արևելյան Հայաստան հասնելով՝ բնակության վայր ընտրեցին Թալինը:

Գալշոյանը կարծես ամբարել էր իր մեջ Սասնա երկրին վերաբերող բոլոր հուշերն ու տեղեկությունները և հետագայում, երբ սկսեց գրել սասունցիների մասին, թվում էր, թե նա եղել էր նրանց հետ Սասնա լեռներում, ապրել նրանց խաղաղ կյանքը, տեղահանության մղձավանջը:

Սովորել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում, աշխատել մասնագիտությամբ, ապա դարձել լրագրող: «Ավանգարդ» թերթում և «Գարուն» ամսագրում աշխատած տարիներին գրեց իր առաջին վիպակը՝ «Զորի Միրոն», որը նրան բերեց հասուն գրողի համարում:

Մ. Գալշոյանի ստեղծած կերպարները իսկական «Սասնա ծռեր» են, որոնք չեն համակերպվում մարդկային պայմանականությունների հետ, միշտ ձգտում են դեպի ակունքները, դեպի բնականն ու մարդկային մաքուր հարաբերությունները: